18րդ դարի սկզբին, երբ Թուրքիան, օգտուելով Իրա- նի ազգամիջեան խզոնութիւններին, փորձում էր մաս- նատել նրա տարածքները, Պետրոս Առաջինը, իրանա- կան իշխանութիւնների համաձայնութեամբ, ուսու- կան գործերը մտցրեց Իրանի երեք գաւառներ: Իսկ երբ իրազեկութիւնը չընթանում փոխուեց, Ռուսաստանն այդ գաւառները վերադարձրեց, համաձայն 1732 եւ 1736 թուականներին Իրանի հետ կնքած իազդուութեան պայմանագրերի: 19րդ դարի սկզբին ուսու-իրանական յարաբերութիւնների սրումը պատճառ դարձաւ 1804-1813 եւ 1826-1828 թուականներին պատերազմներին, որոնք ւաւորուեցին Թուրքիայի պայմանագրի կնքմամբ, որը դարձաւ ուսու-իրանական յարաբերու- թիւնների հետագայ զարգացման հիմքը: Անդրկովկա- սում ստեղծուեցին Ռուսական կայսրութեան մի շարք նահանգներ, այդ թւում՝ նաեւ էրիվանեանը, որը հե- տագայում հիմք ծառայեց վերականգնելու հայկական պետականութիւնը 1918 թուականի Մայիս 28ին:

1917 թուականի Հոկտեմբերից յետոյ խորհրդային Ռուսաստանի եւ Իրանի յարաբերութիւնները նշանա- լորուեցին խաղաղասիրութեան եւ փոխադարձ յար- սանքի հաւասարակշիւտների յատկաբերի փոխակա- մամբ, իսկ 1921 թուականի փետրուարի 28ին Մոսկուա- յում պայմանագիր կնքուեց խորհրդային Ռուսաստա- նի և Իրանի միջեւ՝ «հիմնուած կողմերի իրաւահաւա- րաբարութեան եւ փոխօգնութեան սկզբունքներին վրայ՝ ճանաչելով Իրանի անկախութիւնն ու ինքնիշխանու- թիւնը»:

Խորհրդային Միութեան եւ Իրանի փոխյարաբերու- թիւնների զարգացման ճանապարհին կարեւոր քայլ էր 1927ի Հոկտեմբերի 1ին Մոսկուայում կնքուած պայ- մանագիրը՝ միջազգային երաշխիքներով եւ չէզոքու- թեան վերաբերեալ: Այդ ժամանակ էլ համաձայնագիր ստորագրուեց կասպից ծովի հարաւային եզերքի ձկնոր- սարանների շահագործման մասին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Իրանի տարածքով էր իրազորուելու հակահիթլերեան երկրների ռազմավարական կարեւոր ապրանքների եւ սպառազինութիւնների առաքումը խորհրդային Միու- թիւն: Տեղափոխումներն իրագործուում էին նաեւ Հա- յաստանի տարածքով՝ սահմանամերձ Զուլֆայի վրա- յով: Համաձայն 1942 թուականի Յունուարի 29ին Թեհ- րանում կնքուած պայմանագրի, Անգլիան եւ խորհրդ- դային Միութիւնը պարտաւորութիւն ստանձնեցին իրենց «տրամադրութեան տակ գտնուող բոլոր միջոց- ներով պաշտպանել Իրանը Գերմանիայի կամ ցանկա- ցած այլ տէրութեան ներխուժումից»:

50ական թուականներն աշխուժութիւն մտցրին խորհրդային-իրանական յարաբերութիւններում, որոնցում, սակայն, սառնութիւն զգացուեց, երբ 1955 թուականի Հոկտեմբերին Իրանը միացաւ Պաղատեան դաշնագրին:

Երկու երկրների յարաբերութիւններում առանձնա- կի տեղ է գրաւում Իրանի 1979 թուականի փետրուար- եան յեղափոխութիւնից մինչեւ խորհրդային Միութեան փլուզման միջեւ ընկած ժամանակահատուածը, մի շրջան, որը բնորոշուեց փոխադարձ օտարացմամբ՝ իս- լամական արմատականութեան եւ մարտնչող անասու- ւածութեան «անհամատեղելիութեան» պատճառով: Հասարակաքաղաքական համակարգերի ծայրագոյն զաղափարականացումը երկու երկրներում էլ ճնշում էր ամէն մի գործնապաշտութիւն, որը ներկայումս բուռն ծաղկում է ապրում միջազգային յարաբերու- թիւններում:

Ռուսաստանի եւ Իրանի փոխյարաբերութիւններում բեկումն սկսուեց 90ական թուականներին երկրորդ կէ- սին: Մինչ այդ ինչպէս Իրանում, այնպէս էլ Ռուսաս- տանում կատարուել էին արմատական փոփոխութիւն- ներ: Իրանական հասարակութեան մէջ աւելի ու աւելի աշխուժութիւն սկսեցին ծայրակալ գործնապաշտու- թիւնն ու բացախօսութիւնը, ամրապնդուեցին իրատես- ների քաղաքական-տնտեսական դիրքերը՝ Իրանի իսլա- մական Հայրապետութեան նախագահ Մոհամէտ իս- թեմիի գլխաւորութեամբ:

2000 թուականի Յուլիսին Մոսկուայում հրապարակ- ւեց Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան նոր սկզբունքը, որտեղ Իրանը, փոքրթիւ այլ տէրութիւն- ների շարքում, առանձնացուած էր որպէս Ռուսաստա- նի գլխաւոր գործընկերներից մէկը: Գտնուապէս անհը- րաժեշտ է նշել այն նշանակալից աշխուժացումը ռազ- մական համագործակցութեան ոլորտում, որը սկիզբ առաւ, երբ Մոսկուան հրաժարուեց կատարել Կոր- Չեոնոմիլիտին համաձայնագիրը, որով սահմանափակ- ւում էր համագործակցութիւնը Թեհրանի հետ: Ռու-

սաստանի եւ Իրանի դիրքորոշումները մշտապէս մեր- ձենում են քաղաքական, տնտեսական, բնապահպանա- կան, սահմանային եւ նաւթակազային խնդիրների հա- մալիրում: Հաշուի առնելով ստեղծուած համաշխար- հային եւ շրջանային իրազրուութիւնը՝ Մոսկուայի եւ Թեհրանի ահանաւոր շատ քաղաքական գործիչները ձայն են բարձրացնում ուսու-իրանական յարաբերու- թիւնները «ռազմավարական համագործակցութեան» մակարդակի վրայ ղնելու օգտին:

Երեւելի իրադարձութիւնները շարքը պէտք է դասել Իրանի նախագահ սէյիտ Մոհամէտ իսթեմիի պաշտօ- նական այցը Մոսկուա: Դա Իրանի գործադիր իշխանու- թեան ղեկավարի առաջին այցելութիւնն էր Ռուսաս- տան: Ըստ պաշտօնական տուեալների, այցի ընթաց- քում քննարկուել են երկու կարեւորագոյն խնդիրներ- կասպից ծովի կարգավիճակը եւ ռազմական համագոր- ծակցութեան նոր փուլի փոխհարկաների հարցերը: Առաջին խնդրի շուրջ Մոսկուայի եւ Թեհրանի միջեւ տարածայնութիւններ կան: Ռուսաստանը Ղազախստա- նի եւ Ազրպէյճանի հետ պայմանաւորուածութիւն ու- նէր ծովի բաժանման հետեւեալ բանաձեւի վերաբեր- եալ: «Զուրն ընդհանուր է, իսկ յատկաբ բաժանում է ազգային տարածքների»: Սակայն Իրանը եւ Թուրքմե- նիստանը դէմ են նման ձեւակերպմանը եւ պահանջում են ծովի ջուրն ու յատկաբ բաժանել համամասն ազգա- յին շրջաններին: Այդ կապակցութեամբ իսթեմիին եւ Փութիին արեցին համատեղ յարարարութիւն, որում ասուում է, որ Ռուսաստանն ու Իրանը «մինչեւ կաս- պից ծովի իրաւական դրութեան կատարելագործումը պաշտօնապէս չեն ընդունում ոչ մի սահման այդ ծովի վրայ»: Դա ծայրայից դժգոհութիւն պատճառեց Ղա- զախստանին եւ Ազրպէյճանին, որոնք Մոսկուային մե- ղադրեցին «դաւաճանութեան» մէջ:

Ինչ վերաբերում է երկու երկրների ռազմական հա- մագործակցութեանը, ապա, ինչպէս ասում են Ռուսաս- տանի պաշտպանութեան նախարարութեան ներկայա- ցուցիչները, «Մոսկուայի եւ Թեհրանի միջեւ ռազմա- կան ապրանքաշրջանառութեան որոշակի ծաւալները ոչ միայն ռազմական, այլեւ առեւտրական զաղտնիք են հանդիսանում, բայց միանշանակ է, որ նման համագոր- ծակցութիւնը ձեւաւորում է մեզ եւ չի վնասի բերրող երկրներին, քանի որ գէնքը, որ ծրագրուած է Ռուսաս- տանից Իրան առաքել, պաշտպանական բնոյթի է»:

«Ռուսպորոնէքսփորթ»ի ներկայացուցիչների ասե- լով՝ Իրանին կը մատակարարուի գրահապատեր, հրա- սայլեր, կապի միջոցներ, մարտական ինքնաթիւններ, ռազմական փոխադրական եւ հարուստային ուղղա- թիւններ, հրթիռային մարտավարական համակարգեր, տիգրալիսի սուզանաւեր, ռատիոհաղորդակցման մի- ջոցներ եւ այլ սպառազինութիւն: Ինչպէս տեսնում ենք, ցանկն ընդարձակ է: Ռուս փորձագէտների կարծիքով, արդէն մտարակայ տարիներին Իրան կարող է առաքուել 6-8 միլիառ տոյարի ռազմական սարքեր, եւ դա դեռ սահմանը չէ, եթէ նկատի ունենանք, որ Իրանի բանա- կի վերագինման ծրագիրը գնահատուում է 25 միլիառ տոյար:

Այն, որ Հայաստանն այսօր բոլոր առարկայական հիմքերն ունի նշանակալի դիրք գրաւելու Ռուսաստան- Իրան երկարաժամկէտ ռազմական դաշինքի օղակում, ոչ մէկի կասկածը չի յարուցում: Դրա նախադրեալներն ակնյայտ են:

1.- Եւնեւոյի շրջանում ստեղծուած իրավիճակից՝ Հա- յաստանը Ռուսաստանի ամենայրուսայի ռազմաքաղա- քական գործընկերն է այն երկրների շարքում, որոնք ընդհանուր սահման ունեն Իրանի հետ:

2.- Հայաստանն ամուր բարեկամական յարաբերու- թիւններ է հաստատել Իրանի հետ գործնականում կեն- սագործուելութեան բոլոր ոլորտներում, որոնց հիմ- քում ընկած են ինչպէս գործնապաշտ շահեր, այնպէս էլ երկու ժողովուրդների ազգային-մշակութային նմա- րութեամբ պայմանաւորուած աւանդական բարեացա- կամութիւնը: Բացի այդ, այդ յարաբերութիւններին առանձնակի կայունութիւն է հաղորդում չէզոք, բայց ընկերային գետնի վրայ գործօն հայկական Սփիւռքի առկայութիւնն Իրանում:

3.- Հայաստանը ողջ խորհրդային շրջանում եւ առանձնապէս Երկրորդ Համաշխարհային պատերազ- մի սկզբից առաջատար դիրքեր է գրաւել խորհրդային Միութեան ռազմարդիւնաբերական համալիրում: ազ- գային համախառն արտադրանքի 93 տոկոսը ապահո- վում էին հէնց այդ համալիրին առնչուող աւելի քան 500 ձեռնարկութիւններ:

Թէ ինչ վիճակում են այդ ձեռնարկութիւններն այ- սօր՝ գոյքագրման հարց է: Տուեալ ղէպքում, ինչպէս ասում են, մանրամասներն անտեղի են: Սակայն մի բան պարզ է, չէնքերն ու շինութիւնները հիմնականում պահպանուել են, շատ ձեռնարկութիւններում առկայ է ճարտարագիտական-թեքնիք կորիզը, որը շարունա- կում է աշխատել, գլուխ բերելով մանր պատուէրներ՝ լաւագոյն ապագայի յոյսով:

Այլ կերպ ասած՝ «դեռ երեկոյ չէ», եւ ամէն ինչ կո- րած չէ:

Ինչպիսի՞ն կը լինի մեր մասնակցութեան բաժինը Իրանի ռազմամատակարարման յարահանում՝ այլ իրա- ւասութեան հարց է: Սակայն մեր մասնակցութեան օգ- տին խօսող հիմնականային փաստարկներն ակնյայտօ- ըն է պէտք է լինեն աշխարհագրական մերձութիւնը սպառողին եւ հանրապետութեան առարկայականորէն գնահատուած գիտաարտադրական ներուժը: Մասնա- գէտները գիտեն, որ պարտիրտու-կատարող փոխգոր- ծակցութիւնը չի աւարուում արտադրանքը դէպի իր հասցէն տեղափոխելով, մանաւանդ եթէ այդ արտադ- րանքը ժամանակակից ռազմական սարքաւորում է, քա- նի որ դրանից յետոյ կատարողի համար ծագում են եր- կարաժամկէտ, աշխատատար եւ դժուարին հոգսեր:

Ա. ԿԻՐՈՍԵԱՆ

Շար.ը՝ էջ 8

ՈՉ ՊԱՏԵՐԱԶՄ, ՈՉ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԽԱՂԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է

Նախագահներ Ալիեւի եւ Քոչարեանի քիռուէ սթեան բանակցութիւններն աւարտուեցին «մեծ յաղողութեամբ»: Հէնց այսպիսի գնահատական են տալիս ամերիկացի դիւանագէտները Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգա- լորման հայ-ազրպէյճանական բանակ- ցութիւններին, որոնց ընթացքում, նրանց համոզմամբ, յաղողուեց հասնել «առաւելագոյն հնարաւոր արդիւնքնե- րի»:

Քիռուէ սթեան բանակցութիւնների հիմնական արդիւնքը բանակցութիւննե- րի մասնակիցների եւ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգա- լորման նոր համապարփակ նախագի- մշակումն է, որի շուրջ պէտք է սկսուի բանակցային նոր գործընթաց: Անվերջ ուղղակի եւ «մաքաբային» բանակցու- թիւններին սկիզբ կը դրուի ժոնկլում, որտեղ Յունիսին նախատեսուած է Հա- յաստանի եւ Ազրպէյճանի նախագահնե- րի յաջորդ հանդիպումը: Սպասուում է, որպէս պնդում են փորձագէտները, առա- ջին հերթին պէտք է Մոսկուային, որին Քի Ուէսթում լուրջ մարտահրաւէր նետ- ւեց: Վերջինիս էութիւնը հետեւեալն է. հարակովի սասան ու ղուութեամբ կտրուկ աշխուժացաւ ամերիկեան քա- ղաքականութիւնը, եւ Միացեալ Նա- հանգները արտաքին գործին նախարա- րութիւնը փորձում է պահել Լեռնային Ղարաբաղի կարգաւորման գլխաւոր միջնորդի դերը:

Ակնյայտ է, ամերիկեան կողմը Ֆլո- րիտայում ԵԱՀԿ Մինսքի խմբի իր գոր- ծընկեր-մրցակիցներին, ինչպէս նաեւ Քոչարեանի եւ Ալիեւի հասկացրեց, որ հայ-ազրպէյճանական բանակցութիւն- ների «տանտըրը» Ուաշինգթոնն է: Ամե- րիկեան այս նախաձեռնութեան հիմնա- կան նպատակն է մէկ անգամ եւս հար- ւածել ԵԱՀԿ հեղինակութեանը, որն, ի դէպ, վերջնականապէս վարկաբեկուեց, երբ Պաքուն, ապա Երեւանը «անսպա- սելիորէն» հրապարակեցին ԵԱՀԿ Մինս- քի խմբի համանախագահների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգա- լորման երեք գաղտնի առաջարկները:

Ամերիկեան յօթը վարչակազմի քիռուէ սթեան նախաձեռնութեան հուժ-

կու վերջաբանը կը լինի Քոչարեանի եւ Ալիեւի հանդիպումը նախագահ Պուլչի հետ: Համաձայն Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարար Փոտերի, վերջին յայտարարութիւնների տրամա- բանութեան, Պուլչի հանդիպումները Հայաստանի եւ Ազրպէյճանի առաջ- նորդներին հետ վկայում են քիռուէ սթեան բանակցութիւնների բարձր արդիւնաւէ- տութեան եւ Լեռնային Ղարաբաղի հա- կամարտութեան կարգաւորման շուտա- փոյթ հնարաւոր լուծում մասին: Այն,

ի հակադրութիւն ամերիկեան սեւարիո- յի, չյաջողուեց:

Այնուամենայնիւ ակնյայտ է, որ քիռուէ սթեան հանդիպումը անարդիւնք համարելը կտրականապէս սխալ է: Բա- նակցութիւնների իրական արդիւնքները, որոնք պէտք է ողջունելի լինեն բոլորի համար, շրջանում սրաթիւս-բոյլի պահ- պանումն է, որն այսօր ռազմական գոր- ծողութիւններին հնարաւոր վերահսման միակ այլընտրանքն է:

Ակնյայտ է. այսօր Հայաստանին ընդ- հանուր առմամբ բաւարարում է միջ- նորդների կողմից տարուող «ոչ պատե- րագմ, ոչ խաղաղութիւն» քաղաքակա- նութեան պահպանումը, եւ մասնաւորա- պէս ամերիկացիների կողմից առաջար- կուող՝ Երեւանի եւ Պաքուի միջեւ ուղ- դակի տնտեսական շփումների հաստատ- ման, միաժամանակ Ղարաբաղի շուրջ բանակցութիւններ շարունակելու գա- ղափարը: Նման վիճակը կը բաւարարի Ազրպէյճանի նախագահին եւս, որը, ինչ- պէս կարծում են դիտորդները, կարող է օգտագործել այսպէս կոչուած «Ազրպէյ- ճանի նկատմամբ միջազգային դաւադ- րութեան սպառնալիք»՝ իր իշխանու- թեան շուրջ ազրպէյճանական հասարա- կութեանը համախմբելու նպատակով:

Ազրպէյճանի շահերին համապատաս- խանում է նաեւ բանակցային գործընթա- ցի ներկայ ձեւը, որից Լեռնային Ղարա- բաղը «տէ ֆաքթօ» դուրս է թողնուել: Չնայած միջնորդների հաւաստիացում ներին՝ «Ստեփանակերտին վերադարձնել խաղի մէջ» առաջին իսկ յարմար առի- թով, ակնյայտ է, որ հայկական կողմը, այսպէս կոչուած «երկկողմ ձեւին» հա- մաձայնելով զգալիորէն թուլացրել է իր դիրքերը:

Քիռուէ սթեան հանդիպումների եւս մէկ իւրապատկութիւնը դարձաւ դարա- բողեան հակամարտութեան մէջ Իրանի դերի կարեւորումը: Դա, ինչպէս պնդում են դիտորդները, «ակնյայտ ֆրանսական խաղ է», պայմանաւորուած Փարիզի՝ Իրանի քարիղի եւ կազի նկատմամբ հե- տաքրքրութիւններով: Այս առումով յատկանշական է քիռուէ սթեան բանակ- ցութիւնների ընթացքում պաշտօնական Փարիզի նախաձեռնութիւնը՝ Իրանում Ֆրանսայի դեսպանին ԵԱՀԿ Մինսքի խմբի նոր համանախագահի պաշտօնում նշանակելը: Սակայն ակնյայտ է, որ Ֆրանսացիները դժուար թէ նման քայլի

դիմէին առանց ամերիկեան կողմի համա- պատասխան համաձայնութեան: Չի բա- ցաւուում, ամերիկացիները օգտագործե- լով «Ֆրանսա-իրանական սիրախաղ», կուժանացնեն Թուրքիայի դերը Լեռնա- յին Ղարաբաղի հակամարտութեան կար- գաւորման մէջ, նշանակում է՝ ողջ Հա- րաւային Կովկասում:

ԱՐԱՆ ՉՈՒԱԵԱՆ

«Նեգալիսիմայա Կազեթ» (կրճատումներով) 10 Ապրիլ, 2001

1700ԱՄԵԱԿԻ ՇԵՔԵՐՈՎ

ՀԱՂԱՍ ԵՒ ՍԱՆԱԿՆ

Քրիստոնէութիւնը պե- տական կրօն ընդունելու 1700ամեակի օտոնկատա- րութեան միջոցառումնե- րի մէջ իւրայատուկ տեղ ունեն գրաստիւթեան եւ ուխտագնացութեան երթուղիները, ուր ընդգրկուած են յուշաբ- ձաններ, որոնք իրենց պատմաճարտարապետա- կան նշանակութեամբ մեծ ճանաչում են գտել Հա- յաստանում եւ մեր սահ- մաններից դուրս:

Հաղբատի վանքն այ- սօր Հայաստանի խոշոր- գոյն վանական համալիր- ներից մէկն է, որը 1996 թուականին նախաձեռն- ւել է ԵՊՀ ՄԻՍՔՈՒ միջազ- գային կազմակերպու- թեանը՝ ձեռք բերելով հա- մաշխարհային ճանաչում: Հաղբատ անունը ստու- ձաբանուած է որպէս «ամուր պատ»:

Վանքի գլխաւոր եկե- ղեցին Ս. Նշանն է, որը կա- ռուցել է 976ին Բագրա- տունի Աշոտ թագաւորի կինը՝ Խոսրովանուշ թա- րուհին: Եկեղեցուն բնո- րոշ են միջնադարեան ճարտարապետութեան

մէջ հանրայայտ գմբէթա- տակ կրօն ընդունելու 1700ամեակի օտոնկատա- րութեան միջոցառումնե- րի մէջ իւրայատուկ տեղ ունեն գրաստիւթեան եւ ուխտագնացութեան երթուղիները, ուր ընդգրկուած են յուշաբ- ձաններ, որոնք իրենց պատմաճարտարապետա- կան նշանակութեամբ մեծ ճանաչում են գտել Հա- յաստանում եւ մեր սահ- մաններից դուրս:


Ս. Նշանի գաւիթը ճար- տարապետական ձեւի միջ- նադարեան Հայաստանի ամենակուռ կառոյցներից մէկն է: Կառուցել են Կիւ- րիկի դուստրերը՝ Մարիա- մը եւ Ռոստոյան 1162ին, վերակառուցել է Յովհան- նէս եպիսկոպոս Խաչենա- կան 1201ին: 1257ին վանա- հայր Համազասպ եպիսկո- պոսը կառուցել է հոգեւոր դպրոցը՝ անուանելով ժա- մատուն, որը Հաղբատ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԹՐԵԱԿԱՆ ԸՆԿԱՔԱՐՈՂՁՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱՒԱՐԱՔԱՎԱՆ ՍՈՒՏԵՐՈՒ ՏԱՐԱՓ «ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ԿԱՅՔԸ



www.armenianreality.com կայքը համացանցին վրայ հակահայ քարոզչության գլուխ-գործոցներին մեղք կր հանդիսանալիքի պարունակած սուտերուն առատությամբ էլ այլազանությամբ:

Կայքը նույնպես է «բոլոր անոց, որոնք իրենց կեանքը կորսնցուցին Անատոլիոյ եւ Ազրայժանի մէջ հայերու կողմէ գործադրուած շարդերուն ընթացքին»:


Կայքին իրաքանցիկ բաժինն մէջ կը հանդիպինք «Կաթիլաբոց արիւնով» գրուած գայթակեցուցիչ վերադիրներու՝

«Հայկական Իրականութիւն»

«Հայկական Ահաբեկչութիւն»

«Հայերու գործադրուած Ջարդերը»

«Հայերը կը ստեն» եւ այլն:



ըր եւ ցեղասպանութեան ենթարկուած հայ ժողովուրդը աշխարհին պիտի ներկայանայ թրքական ստեանկիւնէն դիտուած...:

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ «ՀԱԳՆԵԼՈՒ» ՀԱՃՈՅՔԸ



Երբ «Մէտէջուտեց»ի Արհեստագիտական Հիմնարկի (ԷՄ. Այ. ԹԻ.) ուսանող Թէտ Սթարնըրը 1993ին սկսաւ համակարգիչ մը «հագնել», ան ծաղրանքի նշանակ դարձաւ շատերու համար: Այդ օրերուն Թէտ ելեկտրոնային սարքեր պարունակող տուփ մը կը կապէր մէջքին, քիպորտ մը կ'ամբարցնէր իր դաստակին վրայ եւ համակարգիչին փոքր պատտա մը կը գետեղէր ձախաչքին առջեւ:

Այսօր Աթլանթայի Ճորճիա Թէք Հիմնարկի դասախօս դարձած Թէտ Սթարնըրը դժուար թէ ծաղրանքի ենթարկուէր: Նա, Սթարնըրը չէ ձեռքազատած համակարգիչը իր վրան կրելու գաղափարէն, սակայն ան իր մտայնացումը յայտնաբերելու յառաջ մղած է վերջին ութ տարիներուն, որ անոր «հասցած» համակարգիչը գրեթէ անտեսանելի է, կորսուած՝ Սթարնըրի ակնոցին եւ «աւանդական» հագուստներուն՝ շապիկին եւ տարատիւ մէջ: Այս մասին խօսելով՝ Սթարնըրը կ'ըսէ. «Նպատակս եղած է կազմել համակարգիչ մը, որ կ'անհետանայ հագուստներուն մէջ, եւ ոչ ոք կրնայ գուշակել անոր ներկայութիւնը»: Սթարնըրը հասած է իր նպատակին եւ այդ միջոցին ան նաեւ ապահոված է իր տեղը համակարգիչներու աշխարհի անմահներու Ողիմպոսին մէջ, ըլլալով առաջին անձը, որ կը հարթէ համակարգիչներ հագնելու «երազիս» ճամբան:

Այսօր Սթարնըրի հարթած ճամբան խճողուած է անցորդներով: Արդարեւ, «Այ. Պի. ԷՄ.»-ի եւ «Ֆիլիպս»-ի նման գերարդիական սարքեր արտադրող ընկերութիւններ, ինչպէս նաեւ նորածնութեան, հագուստի եւ կոշիկի ընկերութիւնները («Լ.Է.Ի Սթարնըր», «Նայք») փոքր համակարգիչներ կը գետեղեն կոշիկներէն մինչեւ գլխարկներուն մէջ: Այս համակարգիչները «չէզոք» սարքեր չեն, անոնք կրնան «կապ հաստատել» մարմնի տարբեր մասերուն վրայ գետեղուած իրենց «գործընկերներուն» հետ, ինչպէս նաեւ անթիւ հաղորդակցութեամբ կրնան կապուիլ համացանցին:

«Այ. Պի. ԷՄ.» ընկերութիւնը Ապրիլի սկիզբը ցուցադրեց խօսափողներ պարունակող արձաթեայ վզնոցներ, բարձրախօսներ պարունակող օդեր եւ համակարգիչի «մտաւ»ին դերը կատարող մատանիներ: Թէեւ «Այ. Պի. ԷՄ.» տակաւին չէ յայտարարած, թէ երբ հրապարակ պիտի իջեցնէ վերոնշեալ գոհարեղէնները, սակայն այլ ընկերութիւն մը՝ «Ֆիլիպս», գործակցարար նիւնգեր արտադրող «Լեի


Սթարնըր»-ի հետ, այս ամառ հանրութեան մատչելի պիտի դարձնէ «ելեկտրոնիկ հագուստներ», որոնց գրգռանքներուն մէջ ըջիջան հետաձայն եւ երաժշտական սարքեր գետեղուած են: Իսկ օձիքին վրայ տեղադրուած է բարձրախօս մը: «Հիթաշի» ընկերութիւնը, իր կարգին, հաւաստած է, թէ ամբողջ աշխարհէն յատուկ «զըլխարկ» մը, որուն միջոցով կարելի է համացանցին կապուիլ...:

Վերոնշեալ նորարարութիւնները կրնայ գործնական չլինել, սակայն ըստ ուսումնասիրութիւններու, մինչեւ 2010 պատահաններուն 75 առ հարիւրը եւ չափահասներուն 40 առ հարիւրը լիեկտրոնային սարքեր «պիտի հագնին»:

Այս ընթացքով, հետո չէ այն օրերը համակարգիչներ պիտի տեղադրուին շատերու մարմնին մէջ, որպէսզի հագուստները «թեթեւանան»...: «Բաներ, բաներ, ի՛նչ բաներ...»:

ԱՐՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՖԻՍԻՕ ԷՅՓԻ3800 ՍԻ» ՓՐԻՆԹԸՐԸ




«Ռիքօ» ընկերութիւնը վերջերս հրապարակ իր տեսակին մէջ առաջին լէյզըր փրինթըրը (տպիչ սարքը), որ վայրկեանը 28 գունաւոր էջ տպելու կարելիութեամբ օժտուած է: Ան ձեռմակ էջերու տպագրութեան պարագային Ռիքօյի արտադրած փրինթըրին վայրկեանի մը մէջ տպած էջերուն թիւը կը հասնի 38ի:

Տպիչը, որ կը կոչուի «Աֆիսիօ Էյ-Փի3800Սի», լէյզըրը մը կը նկատուի գրասենեակային սարքերու արեւտագիտութեան մէջ: Սարքը օժտուած է «աւանդական» տպիչներուն ընձեռած բոլոր դիւրութիւններով, ինչպէս՝ թուղթեր ծակել, թուղթեր իրարու ամրացնել եւ այլն. աւելի՛ւ, սարքը կրնայ իր մէջ ամբարել 3100 թուղթ եւ կը բանի համակարգչային բոլոր ծրագիրներով եւ տպագրական «փրոթոգր»ներով:

«Ռիքօ-Երոպա»ի արտադրութիւններու բաժնի գլխաւոր տնօրէն Օլիվիէ Վրիպրատրոֆ «Աֆիսիօ Էյ-Փի3800Սի» ներկայացնելէ ետք դիտել տուաւ, որ ընկերութեան լէյզըրը արտադրութիւնները, ինչպէս՝ ինչորոշ առարկայ տպիչը, ձմեռայ պիտի հարթեն յառաջիկայ տարիներուն տպագրական մեքենաներու շուկային մէջ «Ռիքօ»ի գլխաւոր դերակատար մը դառնալուն:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ

*<http://www.psychology.net>
Ամէն օր վերաթարմացուող համացանցի այս կայքը հանրութեան կը ներկայացնէ հոգեբանութեան հետ առնչուող լուրեր եւ յօդուածներ:



*<http://spsp.clarion.edu/mm/RDE3/start/RDE3start.html>
Հոգեբանական ուսումնասիրութիւններու եւ գիտաշխատութիւններու մասին դասագիրք մը՝ համացանցին վրայ: Դիւրամբարելի բացատրութիւններու կողքին, դասագիրքը նաեւ կ'ընդգրկէ վարժութիւններ իրենց պատասխաններով:

*http://www.s-cool.co.uk/topic_index/index.asp?subject_id=14
Այս կայքը կը ներկայացնէ զպրոցական մակարդակի հոգեբանութեան դասընթացները:

*<http://stange.simplenet.com/psycsite/>
Հաւասարապէս մասնագէտները եւ ուսանողները հետաքրքրող յանձնարարելի կայք մը, ուր հոգեբանութեան մասին այլազան նիւթեր լաւապէս դասակարգուած եւ ներկայացուած են:

*www.apa.org/ed/topsshompage.html
Երկրորդական դպրոցներու մէջ հոգեբանութեան ուսուցիչներու յատուկ այս կայքը իր տեսակին մէջ լաւագոյնը կը նկատուի:

*www.bruneau.org/test/index.html
www.psychologie.org/tests.htm
www.megapsy.com
www.queendom.com

Վերոնշեալ չորս հասցէները այցելողներուն դիմաց կը բացուի հոգեբանական հարցարաններու աշխարհը. այցելողներ այս կայքերուն մէջ կրնան գտնել բազմա-տասնակ թեմաներով հարցարաններ, գորս ամբողջացնել միանգամայն շահեկան եւ հետաքրքրական էջ:

ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԻՆ ԿԱՅՔԸ



Միշիկենի համալսարանի (Տիրպորն) Հայկական Ուսումնասիրութիւններու կեդրոնը համացանցին վրայ հաստատած է իր կայքը, հետեւեալ հասցով.

www.umd.umich.edu/dept/armenian

Կայքը կ'ընդգրկէ՝

- Տեղեկութիւններ՝ Հայկական Ուսումնասիրութիւններու կեդրոնին մասին:
- Նիւթեր՝ Հայաստանի, Լեւոնային Ղարաբաղի եւ Հայկական Յեղափոխութեան շուրջ:
- Տօքթ. Տենիս փափագանի գրութիւններէն ընտրանի մը:
- Հայ գրականութեան նուիրուած բաժին մը, ուր ներկայացուած են շարք մը հայ բանաստեղծներու (Չարան, Շիրազ, Սեւակ, Վարուժան, Սիւմանթո) եւ Չարենց եւ ուրիշներ) կարգ մը քերթուածներ:

Այս էջը պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումն բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ՄԻՒՈՆՏՐԸՆԷ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՄԲԱՏՅԵԱԼ

ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԿԸ ԾԱՆՈՒՅԱՆԵՆՔ ԹԷ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԵՍԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ

ԸՆԴԵՐՁԵԱԼ Է ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՈՆԻ ՕՐԸՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ, ՇԵՐԱԹ, 26 ՄԱՅԻՍ 2001Ի ԵՐԵՎԱՆԵԱՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՍ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՍԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ, ԱՆԹԻԼԻԱՍ

LIVE ENTERTAINMENT EVERY NIGHT WITH **MARIA** GREAT MOOD / GREAT FOOD GREAT PRICES **PUB-RESTAURANT** **Malibu** INTERNATIONAL RUSSIAN-UKRAINIAN LEBANESE CUISINE Ամեն երեկոյ ջերմ մթնոլորտի մէջ անցուցէք խանդավառ ժամեր: Դայերէն եւ միջազգային երգեր մեկնաբանութեամբ՝ ՄԱՐԻԱՅԻ: Malibu Bay - Mezmelein old road - tel: 09/643340-09/644888(ext180)


Մանկապատանեկան

ԶԵՆՈՒՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ




Անշուշտ կարելի չէ Ձատիկը անցրնել առանց հաւկիթներ գարդարելու: Եթէ շուարած ես եւ չես գիտեր ինչ ձեռով ներկայացնել հաւկիթները, այս սիւնակին մէջ պիտի գտնես քանի մը օրինակներ: Այս տարի մի՛ բաւարարուիր հաւկիթները պարզապէս ներկելով, այլ



անոնց վրայ աւելցուր տարբեր տարբեր (խաւաքարտէ «խողովակ», բուրդի կտորներ եւ այլն...) եւ հաւկիթը ամբողջովին կերպարանափոխէ: Կրնաս նաեւ աշխատիլ նիւթի մը շուրջ (օրինակի համար՝ ագարակի կենդանիները, կրկէսը, գագաններ, վճուկներ, պարկեր եւ այլն...):

ՀԱՒԿԻԹՆԵՐ ԶԱՐԴԱՐԵՆՔ

1) ՀԱՒԿԻԹԱՄԱՆ



Պէտք ունիս - Կերպրնկալէ (ջուրի) պարապ շիշեր իրենց կափարիչներով, կուաշ արբիլիք ներկեր:

Ա - Չափահասէ մը խնդրէ, որ քեզի օգնէ կերպրնկալէ շիշերը կտրելու, շիշին բերանէն մօտաւորապէս 5,5 սմ.: Կրնաս գործածել հացի դանակ մը կամ մկրատին ծայրով ծակ մը բանալ եւ ապա մկրատով կտրել:

Բ - Հաւկիթամանները ներկէ կուաշ արբիլիք ներկերով (առանց շատ ջուր խառնելու): Նախ ճերմակ ներկի խաւ մը քսէ, ձգէ, որ շորնայ, ապա գարդարէ հաւկիթամանը ուզած ձեւովը եւ գոյներով:


Գ - Որպէսզի հաւկիթամանը հաստատուն մնայ, անոր մէջ գնդիկ մը դիր եւ ապա վրան դիր հաւկիթը:

2) ԿԵՆՏՐԱՆԱՐԱՆԱՎԱՆ ՊԱՐՏԷԶ ՄԸ
Հաւկիթները գարդարելու համար կրնաս մէկ նիւթի մը վրայ կեղբոնանալ: Օրինակի համար, պատրաստել կենդանաբանական պարտէզ մը:

Պէտք պիտի ունենաս յատկապէս բարակ խաւաքարտի, ներկերու եւ խէժի:



Կրնաս ներշնչուիլ այս սիւնակին մէջի օրինակներէն կամ հնարել քու անձնական օրինակներդ:



3) ՀԱՒԿԻԹԱՄԱՆԻ ԶԱՐԴԻՐ

Պէտք ունիս - ինաւաքարտի, ներկերու, մկրատի: Ա - ինաւաքարտի մը վրայ գծէ եւ կտրէ ճուտիկի մը կամ թռչունի մը գլուխը եւ թեւերը, առանց մոռնալու վարի բաժինին վրայ յեղուակ մը ձգելու:



Բ - Գունաւոր ինաւաքարտեր կտրելով աւելցուր կենդանիին մարմնին եւ գլխուն մանրամասնութիւնները: Մի՛ մոռնար յեղուակին եւ թեւերուն միջեւ ճեղք մը բանալ, որպէսզի կարենաս կենդանիին մարմինը անցրնել հաւկիթամանին վրայ:

4) ՀԱՒԿԻԹՆԵՐԸ ԶԱՐԴԱՐԵԼ...

... Անոնց տարբեր կերպարանքներ տալով: Հաւկիթները ներկելէ ետք պոտիկ ինաւաքարտներու կտորներով կրնաս գանոք վերածել հաւկիթի, նապատակի, հնդիկի, չիպցիի եւ այլն...

ՃԱՇԿԵՐՈՅԹ
Կազմակերպութեամբ՝
ԼԵՅԼԱՆԱՆԻ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 19 Մայիս 2001ին երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, Riviera պանդոկի «Beryte» սրահին մէջ:

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՏԱՌՆԵԱՅՄԱՆ 1700ԱՄԵԱՅ
ԲԱՅԱՌԻԿ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԹԻ
Կազմակերպութեամբ
ՍՐԲՈՅ ՀՆՈՒՄԻՄԵԱՆՅ ՎԱՐՄԱՐԱՆԻ
ՆՏՕՐԵՆՈՒԹԵԱՆ
Ուխտագնացութիւնը բաց է, ծնողաց, ներկայ աշակերտութեան, նախկին սան - սանուհիներու եւ բարեկամներու համար:
14 - 28 Յուլիս 2001

Ուխտագնացութիւնը կ'ընդգրկէ.
ա. - Սուրբ եւ անմահ պատարագ խոր Կիրակի եւ Ս. Հռիփսիմի տաճարներուն մէջ:
բ. - Այցելութիւններ պատմական սրբատեղիներու:
գ. - Պոտյոներ Հայաստանի բոլոր շրջաններու տեսարժան վայրեր:
դ. - Մշակութային երեկոյներու մասնակցութիւն, օփերա, քատրոն...
ե. - Ճամբորդութեան, կեցութեան եւ սնունդի ամբողջական եւ լաւագոյն պայմաններ:
զ. - Փոքրերու մասնակի 10 օրուան կեցութիւն եւ յայտագիր ձամբարի մէջ - Ծաղկաձոր:
Ուխտագնացութիւնը կ'ըլլայ ըստ անձնական փափաքի ՄԵԿ կամ ԵՐԿՈՒ ԶԵՐԱԹ
Յանելալ մանրամասնութիւններու համար դիմել 01 - 891068, 01 - 891099, 03 - 349479:

ՀԱՐՅԱՐԱՆ

ՏՈՒՐՄԻՆ ՄԱՍԻՆ

1) Այս ծառին գիտական եւ լատիններէն անուանող Թեօպրոմա քարաօ է: Ի՞նչ կը նշանակէ Թեօպրոմա:
ա. - Սրնագոյն ձուկ:
բ. - Աստուածներու կերակուր:
գ. - Ջուրի մշուշ:

2) Քաքառոյի հատիկները ինչի՞ ծառայած են:
ա. - Կրակ վառելու:
բ. - Իբրեւ շրթուցի կերակուր:
գ. - Իբրեւ փոխանակումի դրամ:

3) Ո՞ր եւրոպական երկիրը առաջին անգամ գտած է տուրմը:
ա. - Պելկիքա:
բ. - Ջուրիցիքա:
գ. - Սպանիա:

4) Ո՞վ է Քոնրատ Վան Հուլթը:
ա. - Փոշի քարանձաւորող:
բ. - Տուրմը իր երկիրը ներածած Հոլանտայի քաղաքացի:
գ. - Այն գործարար, որ իր գինուրներուն տուրմ կու տար, որպէսզի անոնք արթուն մնան:

5. - Ո՞րն է քաքառոյի հատիկ արտադրող առաջին երկիրը:
ա. - Հնդկաստան:
բ. - Փոլսկրեայ Ա. փուլը:
գ. - Պրագիլ:
Պատասխաններ է՞ջ՝ 10

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ

ԲԱՐԻՒ ԱՆՈՐԺԱԿ

Ուտելիքներու վերաբերելով սովորութիւնները կը տարբերին երկրէ երկիր: Հինտոները չեն ուտեր եգի, իսկ իսլամները խոզի միս: Մենք բնաւ չենք մտածել շուրջ միս հրածոյնէ, մինչ Չինաստանի մէջ ասիկա շատ սիրուած ճաշատեսակ մըն է: Հարաւային Ամերիկայի բնակիչները շատ կը սիրեն մըլիւն ուտել, Աւստրալիոյ բնիկ ժողովուրդները կը նախընտրեն որդերը, նաւայօ հնդիկները կ'ուտեն մարախ եւ, վերջապէս, Լատսի մէջ շատ յարգի է շերեփանիկը:



ՄԵՂՐ ԿԸ ՍԻՐԵՍ

Եթէ կը սիրես, մի՛ մոռնար շնորհակալութիւն յայտնելու մեղուներուն, որովհետեւ անոնք մեծ ճիգ կը թափեն այս նիւթը շինելու համար: Մէկ կրամ մեղը շինելու համար մեղուն պէտք է մօտաւորապէս 4500 քիլո-մետր կտրէ: Յաջողիկն, երբ մեղը ուտես, պոտիկ հաշիւ մըրդէ: Կշռէ հացիկ վրայ դրած մեղը եւ ապա հաշուէ, թէ մեղունները քանի՞ քիլոմետր կտրած են զայն արտադրելու համար:


ՀՍԿԱՅԱԿԱՆ ԾԱՂԻԿ ՄԸ

Ինտոնեգիոյ մէջ գոյութիւն ունի ծաղիկ մը, որ կը կշռէ 10 քիլո: Անոր տրամագիծը կը հասնի մէկ մետրի: Ռաֆիտիան անուշիկ ծաղիկ մըն է, սակայն շատ գործնական չէ զայն տան մէջ խնամելը, նոյնիսկ եթէ անոր չափով ծաղկաման մը գտնես: Այս ծաղիկը ունի... փոստ միսի կոտ, որ իրեն կը քաշէ ճանճերը:


ԺԱՄԱՆՅ




Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 15 տարբերութիւնները:



Կտերը իրարու միացուր 1-62՝ գտնելու համար պահուած պատկերը:



Քանի՞ զանգակ կը տեսնես այս պատկերին մէջ:



Դեպի ո՞ր կողմը պետք է դարձնել կոթը՝ հաւկիթը ձգնելու համար:


Պատրաստե՛ց՝ ՇՈՒՇԻԿ ՍԱՒԻՍԱԳԱԼԵԱՆ

Կազմակերպութեամբ՝
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Ս. ԿՐԱՅԵԱՆ» ՄԱՍՆԱԺԻՂԻ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ
ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՅ
Մասնակցութեամբ՝
ՊԼՊՅԵԱՆ ՆՈՒԿԱՆՈՒՄԻՆ ԵՒ «ՍԱՅԵԱԹ ՆՈՒԿԱՆՈՒՄԻ ԵՐԳԻՉ ՍԵՒԱԿ ՊԵՏՈՒԵԱՆԻ»
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Ապրիլ 2001. երեկոյեան ժամը 8:00էն սկսեալ. Ս. Սարգիս եկեղեցոյ Բակլոր Աղասարգիսեան սրահին մէջ:
Սակ՝ 20.000 լ.ո.

ԱՉԳ. Գ. ԶԱԹԱԼՊԱՇԵԱՆ - ԹՈՐԳՈՍԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՂԱՆԴԷՍ
Հովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց քեմի)
Մասնակցութեամբ՝
Սիրուած երգիչ
ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ
Ընկերակցութեամբ՝
ՍԵՂՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ
եւ իր նուագախումբին
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 5 Մայիս 2001. երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, State Hall Banquet սրահ Սարգիսեան պանդոկի մէջ, Քասիք:
● Տոմարը ապահովելու համար
Հեռ. կ.ա. 01-449925. կ.ե. 03-430798:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՂԻ ԱԵՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ

Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 22րդ և վերջին հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Թատամոն Սուր, որ անցեալ շաբաթ 4-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռասիւնը անգամ ըլլալով հանդիսացաւ Լիբանանի ասոցիացիայի մրցումը պիտի կատարէ Հ.Մ.Ս.ի դէմ, ժուլիէի Քապապետարանի դաշտին վրայ:

Վստահաբար հարաւի կազմին համար մրցումը պիտի ըլլայ «անկարելի», սակայն Հ.Մ.Ս.ի համար նոյնը չէ պարագան, որովհետեւ անկիւ տակաւին վտանգուած է Բ. դասակարգ փոխադրուելու, մնացեալ երեք կազմերուն՝ Ռասիւնի, Աիլի Սայտայի եւ Հ.Մ.Ս.ի հետ:

Հ.Մ.Ս.ի ներկայացուցչական կազմը իր մրցումը պիտի կատարէ Սուրի մէջ, ուր պիտի ճակատի Աիլի Սայտայի դէմ:

Հ.Մ.Ս. ունի 12 կէտ, իսկ Աիլի Սայտայ՝ 15 կէտ: Ռասիւնը եւ ունի 15 կէտ, իսկ Հ.Մ.Ս.՝ 16 կէտ:

Ստորեւ՝ 22րդ և վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ
Ժամ Դաշտ
Անսար - Սայամ 4:30ին Պորձ Համուս
Շապապ Սահէյ - Աիս Աիլի Այէյ 4:30ին Ժուլիէի
ՎԱՂԸ
Աիլի Սայտա - Հ.Մ.Ս. 4:30ին Սուր
Հ.Մ.Ս. - Թատամոն Սուր 4:30ին Ժուլիէի
Ռասիւն - Սաժէս 4:30ին Թրիփոլի
Նրժմէ - Սաֆա 4:30ին Պորձ Համուս
22րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, այժմ դասաւորուած կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

| | Կէտ |
|------------------|------------|
| 1. Թատամոն Սուր | 51 (56-16) |
| 2. Նրժմէ | 43 (44-21) |
| 3. Սաժէս | 43 (46-25) |
| 4. Աիս Աիլի Այէյ | 43 (43-24) |
| 5. Անսար | 33 (39-29) |
| 6. Սայամ | 31 (33-29) |
| 7. Սաֆա | 26 (25-32) |
| 8. Շապապ Սահէյ | 19 (23-45) |
| 9. Հ.Մ.Ս. | 16 (26-39) |
| 10. Ռասիւն | 15 (20-42) |
| 11. Աիլի Սայտա | 15 (17-44) |
| 12. Հ.Մ.Ս. | 12 (22-48) |

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹԳՈՂԻ ԱԵՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻՎԵՐՓՈՒԼ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ԼԻԾԷՆ

Անգլիոյ ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 33րդ հանգրուանի բացման մրցումին, երէկ Լիվերփուլ իր դաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութեան մը կրեց իր հիւրէն Լիժէն: Լիվերփուլ, որ տար մարպիկով աստուծոց մրցումը, այսպիսով կրեց եղանակի իր 9րդ պարտութիւնը:

70րդ վայրկեանի Լիվերփուլի մարպիկ Սթիւըն Ժեռար կարմիր քարտ մը ստացաւ, սակայն Լիժէն արդէն իսկ նշանակած էր իր երկու կողերը եւ Ա. կիսախաղին 2-0 արդիւնքով յառաջացած, շնորհիւ Ռիօ Ֆերտի-նանտի (4րդ) եւ Լի Պոլլըրի (33րդ նշանակած կոլերուն): Նոյնիսկ Ժեռար, որ կարմիր քարտ ստացած էր, նշանակեց Լիվերփուլի կողը (55րդ):

Երկուսն երկրորդ մրցումին, վերջին դիրքը գրաւող Պրէտֆորտ, որ կը հիւրընկալէր Չարլթընը (9րդ), 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց:

Այսօրուան մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըտ պիտի հիւրընկալէ վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Քովենթըրի (18րդ), որ Ա. դասակարգ փոխադրուելու վտանգին տակ կը գտնուի: Քովենթըրի, որ 34 տարիէ ի վեր Ա. դասակարգ չէ փոխադրուած, պարտութեան մը պարագային դժուար թէ կարենայ բարձրագոյն դասակարգ մնալ:

Մանչեսթըրի մարպիչ Ալէքս Ֆերկլըսըն կը մտադրէ իր կարգ մը հիմնական մարպիկները դաշտ ներկայացնել, որովհետեւ անիկա յառաջիկայ շաբաթ Պալերմ Միւսիլիի դէմ մրցում մը ունի կատարելիք «25 միլիոն Լիվ»-ին գծով:

Իր կարգին, Արսենալ (2րդ) Միտլըյ պորտի (17րդ) դէմ տեղի ունենալիք մրցումին շատ հաւանաբար պահեստի մարպիկներով դաշտ ներկայանալ, որովհետեւ մարպիչ Արսեն Վենկերի կազմը յառաջիկայ Շաբաթ «25 միլիոն Լիվ»-ին գծով մրցում մը ունի կատարելիք վալենսիայի դէմ:

Ստորեւ՝ շաբաթավերջին եւ յառաջիկայ շաբաթսակիբին տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ
Արսենալ - Միտլըյ պորտ
Ասթոն Վիլա - Էվերթըն
Չելսի - Սաութհեմթըն
Իփսուիչ - Նիւքեմբըր
Լայպըր Սիթի - Մանչեսթըր Սիթի
Մանչեսթըր Եունայթըտ - Քովենթըրի
Սանտըրլէնտ - Թոթեմհամ
Ուէսթ Համ - Տերափ Քաունթի

ԵՐԿՈՒՇԱՐԹ
Քովենթըրի - Սանտըրլէնտ
Տերափ Քաունթի - Լայպըր Սիթի
Էվերթըն - Լիվերփուլ
Միտլըյ պորտ - Իփսուիչ
Նիւքեմբըր - Ուէսթ Համ

ԵՐԵՇԱՐԹ
Չարլթըն - Ասթոն Վիլա
Թոթեմհամ - Չելսի

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹԳՈՂԻ ԱԵՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ 31ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Ֆրանսայի ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 31րդ հանգրուանը կը սկսի այսօր եւ կ'աւարտի վաղը:

Պարագլուխի կազմը՝ Նանթը կը հիւրընկալէ Պասթիան (11րդ): «Դեղին դեղ-ձանիկներ»ը ամէն գնով պիտի փորձեն 3 կէտ ապահովել իրենց դաշտին վրայ, առաջին դիրքը չկորսնցնելու համար: Ախոյեանութեան աւարտին մնացած է չորս հանգրուան (ներառեալ այս մէկը) եւ Նանթը պիտի կառչի դիրքին՝ տիտղոսին տիրանալու յոյսով:

Մրցակիցը՝ Պասթիա, Քորսիքայի միակ ներկայացուցիչը, միշտ ալ նկատուած է վտանգաւոր կազմ մը, թէեւ անիկա այս օրերուն չունի նախկին իր հեղինակաւոր դիրքը, ոչ ալ ներդաշնակ խաղարկութիւնը: Այսուհանդերձ Ֆուտբոլի մէջ չկայ տկար մրցակից եւ ամէն բան սպասելի է:

Նանթէն միայն երկու կէտով ետ մնացող եւ Բ. դիրքը գրաւող Լիլ ունի յարաբերաբար աւելի դժուար մրցակից մը՝ Օքսէտ, որ մնանաւոր որ մրցումը տեղի պիտի ունենայ Օքսէտի (9րդ) դաշ-

տին վրայ: Լիլ դաշտ պիտի ներկայանայ 31րդ հանգրուանի արդիւնքը Ֆիւնիոլի, որ վիրաւոր է:

3րդ դիրքը գրաւող Լիոն կ'ընդունի Փարիզ Մէն Ժերմէնը: Հիւրընկալ կազմը վերջին 9 մրցումներուն պարտութիւն չէ կրած, իսկ վերջին 7 մրցումներուն, անոր աստղը՝ պրպիլիցի Սոնի Անտերսոն նշանակած է 9 կոլ: Ասոր դիմաց, մայրաքաղաքի կազմը կը գրաւէ 10րդ դիրքը եւ կը շարունակէ հապի միջակ ելոյթներ ունենալ: Այսուհանդերձ Լիոն - Փ. Ս. Ժ. մրցումները միշտ ալ եղած են տաք եւ հետաքրքրական, իսկ այս մէկը եւս շատ հաւանաբար ըլլալ նոյնպէս:

4րդ դիրքը գրաւող Պորտո պիտի հիւրընկալէ Սթրասպուրը (17րդ): Պորտո իր կարգին պիտի ուզէ ամէն գնով յաղթել, իր թէեւ չնչին, բայց թուաբանականօրէն տակաւին կարելի յոյսերը պահելու տիտղոսին գծով: Անիկա 6 կէտով ետ կը մնայ պարագլուխի Նանթէն:

Մարսէյ (15րդ), որ դաշտ պիտի ներկայանայ իր նոր մարպիչին՝ Թոմիսլաւ Իվիլի

հետ (որ փոխարինեց Խաւիէ Քլեմենթէն), «Վելոտոմ»ի մէջ պիտի ընդունի Սրտանը (5րդ): Մարսէյի համար թէեւ դիրքին չէ 3 կէտ խլելը, սակայն անիկա պիտի փորձէ ամէն գնով այդ մէկը իրականացնել, վերստին կորով ներշնչելու իր բազմապարհ համակիրներուն: Մարսէյին պիտի բացակայի Պրիւսո Նկոթի:

Մոնպո (12րդ) պիտի հիւրընկալէ Մէնթ Էթիէնը, որ գրեթէ «ապահոված է» Բ. դասակարգի տոմսը: Անցեալ տարուան ասոյեան կազմը այս եղանակին կը գտնուի ոչ կայուն վիճակի մէջ, թէեւ անիկա կրցաւ ապահովել Ֆրանսայի Լիկայի բաժակի մրցաշարքի աւարտական տոմսը եւ տիտղոսը շահելու պարագային կրնայ ետ: Է. Էֆ. Ա. Ի տոմսը ապահովել յաջող եղանակին համար:

Ստորեւ՝ յայտագիրը.

Նանթ - Պասթիա
Օքսէտ - Լիլ
Լանս - Թրուա
Պորտո - Սթրասպուր
Կենկան - Մէն
Մոնպո - Մէնթ Էթիէն

Մարսէյ - Սրտան
Թուլուզ - Ռենն
Լիոն - Փ. Ս. Ժերմէն

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹԳՈՂԻ ԱԵՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

30ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ ԿԸ ՍԿՍԻ ԱՅՍՕՐ

Սպանիոյ ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 30րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ռէալ Մատրիտ, որ պիտի հիւրընկալէ Վիարէալը (8րդ), ոչ մէկ ճիգ պիտի խնայէ Տեփոթիօ Քորուսայի վրայ իր ունեցած կէտերու տարբերութիւնը 11 կէտով, անշուշտ եթէ յաջողի պարտութեան մատնել իր հիւրը:

2րդ դիրքը գրաւող Տեփոթիօ Քորուսայ համեմատաբար աւելի հանգիստ մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալի 18րդ եւ վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Օսասունան:

Մայրաքաղաքի կազմին պարտութեան պարագային, Տեփոթիօ յոյս ունի կէտերու տարբերութիւնը նուազեցնել իննգի, անշուշտ եթէ երեք կէտ կարենայ խլել իր հիւրէն: Սակայն Տեփոթիօ դաշտ պիտի ներկայանայ առանց ձալմանիայի. Մանուէլ Փալոյի. Տոնաթոյի եւ Նուրետտին Նայպի (բոլորն ալ կախակայուն):

Տեփոթիօ Քորուսայ, որ վալենսիայի եւ Պարսելոնայի կողքին կը պայքարի տիտղոսին տիրանալու համար (վստահաբար չմոռնալով Ռէալ Մատրիտը), այս եղանակին ցարդ իր դաշտին վրայ պարտութիւն չէ կրած:

Պարսելոնա (4րդ), որ պիտի հիւրընկալէ Ռէալ Մատրիտ (13րդ), պիտի փորձէ որեւէ անակնկալի առջեւ չգտնուիլ եւ իր կարելիին պիտի ընէ

Ստորեւ՝ 30րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ
Պարսելոնա - Ռէալ Մատրիտ
Տեփոթիօ Քորուսայ - Օսասունա
Ռէալ Մատրիտ - Վիարէալ
Վալենսիա - Ալաւես
ՎԱՂԸ
Սթիւքիթո Պիլաօ - Էսփանիոլ
Մալիա - Ռայօ Վալյէքանո
Նումանսիա - Ռէալ Սոսիէտատ
Ռասիւն Սանթանտեր - Սելթա Վիկո
Մայորքա - Լաս Փայմաս
Ռէալ Վալադոլիտ - Ռէալ Օվիէնո

ՔԱՆՉԻՈ
ԵՆՈՒՎԵՆԹՈՒՄ - ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ՝ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Քալչիոյի (Իտալիոյ ֆուտբոլի ասոցիացիայի կողմից) 26րդ հանգրուանի ամէնէն հետաքրքրական մրցումը պիտի ըլլայ Եովենթոս - Ինթեր Միլան ճակատումը, որ տեղի պիտի ունենայ Եովենթի դաշտին՝ «Տել Ալփի»-ի մէջ:

Պարագլուխի կազմը՝ Ա. Էս. Ռոմա կը հիւրընկալէ Փերուճիան (11րդ): Ռոմայի «արկած»-ի մը պարագային, Եովենթի թէ յաղթէ, 3 կէտի կ'իջեցնէ իրենց միջեւ կէտերու տարբերութիւնը:

Ստորեւ՝ յայտագիրը.

Վիչենցա - Պոլոնիա
Պարի - Նափոլի
Պրեշիա - Վերոնա
Ֆիորենթինա - Լեչէ
Եովենթոս - Ինթեր Միլան
Ա. Սէ. Միլան - Ուտինէպէ
Ռեճինա - Լացիո
Ա. Էս. Ռոմա - Փերուճիա

ՖՈՐՄԱՅԻՆ

ՎԱՂԸ՝ ԻՄՈՒԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Ֆորմիլա 1ի 2001ի աշխարհի ասոցիացիայի կողմից 4րդ հանգրուանը՝ Իմոլայի (Իտալիա) կրան փրին տեղի պիտի ունենայ վաղը: Բոլոր լուսարձակները բնականաբար կեդրոնացած են աշխարհի ասոցիացի գերմանացի Միքայել Շումպերի վրայ, որ Ֆեռարիի երկրի մէջ կը սպասուի տիտղոսը խլել կարմիր «Իրաշալիք»-ով եւ ուրախացնել բազմապար «Թի-Ֆոյի»-ները...

Երէկուան փորձ-մրցումներուն, Ֆեռարի արձանագրեց լուսագոյն արդիւնքը. Շումի՝ առաջին, իսկ անոր խմբակիցը՝ պրպիլիցի Ռուպէնս Պարիքելլո՝ երկրորդ:

Յամենայնդէպ այս փորձերը ոչինչ կը նշանակեն եւ կարելորդ այսօրուան փոխ-փոփոխը մրցումն է, որ վաղուան մրցումին համար մեծ նշանակութիւն կրնայ ունենալ:

Վերջին երկու տարիներուն, Շումի Իմոլայի մէջ մեծագոյն յաղթականն է: Դարձուածքներով «Խարուստ» փիւթը կը յարմարի անոր թշտու ոճին եւ ան շատ կը սիրէ այդ փիւթը:

Եթէ վերջին տարիներուն Ֆեռարիի միակ մրցակիցն էր Մաքլարըն, որուն երկու վարորդները՝ ֆինլանդացի Միքա Հաքինէն (երկու անգամ աշխարհի ասոցիացի) եւ բրիտանացի Տէյվիտ Քոլթարտ բացառիկ վարորդներ են, այս տարի եւ յատկապէս վերջին մրցումին (Պրպիլի մէջ) ի յայտ եկած է նոր տաղանդ մը՝ երիտասարդ քոլմուսիցի Խուսա Փալոյ Պարթոյա (Ուիլիքս), որ բոլորին կարծիքով կը նկատուի տաղանդաւոր վարորդ մը, իսկ շատերու համաձայն՝ ան կրնայ ըլլալ ապագայի Շումի...

Վաղուան մրցումը ուրեմն կրնայ դարձալ Ֆեռարի - Մաքլարըն պայքարի «բեմ» հանդիսանալ, ուր Շումի պիտի փորձէ ամէն գնով շահիլ տիտղոսը, ինչ որ անոր մեծ առաւելութիւն մը տուած պիտի ըլլայ ընդհանուր դասաւորման մէջ: Ան արդէն հանգիստ բազմած է պարագլուխի դիրքին վրայ, իսկ վաղը 10 յաւելելալ կէտ ապահովելով կրնայ ուղղակի առանձնանալ առաջին դիրքին վրայ: Միւս կողմէ, Քոլթարտ եթէ ինք շահի վաղը տիտղոսը, բաւական մտաեցած պիտի ըլլայ Շումիի, հետեւաբար այսուհետեւ պայքարը բաւական սուր պիտի ըլլալ անոնց միջեւ:

Վերջապէս, կրնայ անշուշտ նաեւ վերոյիշեալ անուններէն բոլորովին այլ վարորդ մը շահիլ մրցումը եւ «խանգարել» բոլոր հաշիւները, բան մը, որ շատ աւելի «համ ու հոտ» կու տայ ասոցիացիներուն, պարզապէս որովհետեւ մարպաշխարհին մէջ մենաշնորհը միշտ ալ հաշտ աչքով չէ դիտուած մարպաշխարհներուն կողմէ...

«ՆԻԻ ԵՈՐՔ ԼԱՅՏ» ԿԸ ՓՈՐՉԷ...

Շարունակուած 3րդ էջէն

Թուրքիոյ մէջ: «Այս ձեռով յաճախորդներուն ժառանգորդները պիտի կարենան իրենց պահանջները ներկայացնել կրեւորութեան, որ պահանջ պիտի վճարէ տոկոսներով», ըսած է ան:

1915ին «Նիւ Եորք Լայֆ» Օսմանեան կայսրութեան մէջ ունեցած է շուրջ 8 հազար յաճախորդներ, որոնցմէ մտաւորապէս 3600ը հայեր էին: Ըստ ընկերութեան արխիւներուն, շուրջ 1100 հայ յաճախորդներու պարտքը նախապէս վճարուած է, իսկ 300ը նախապէս 1915 զոյցած են իրենց հաշիւը: Կը մնան շուրջ 2400 անյոյժ պարագաներ:

Երկուշաբթի, 9 Ապրիլին իրաւաբան Վարդգէս Եղիայեան, անդրադառնալով «Նիւ Եորք Լայֆ»-ի մասին հաղորդագրութեան, յայտնած է, թէ ինք եւ իր յաճախորդները համամիտ չեն նման համաձայնութեան մը: Ան աւելցուցած է, որ դժգոհ է, որ ապահովագրական ընկերութիւնը նման հաղորդագրութիւնը մը ուզած է իրապարակել, թէեւ իր կողմէ վարձուած իրաւաբանական գրասենեակը հաղորդագրութեամբ մը հաստատած է «Նիւ Եորք Լայֆ»-ի հետ սկզբունքային համաձայնութեան փաստը:

«Նիւ Եորք Լայֆ» իր յայտարարութեան մէջ չէ օգտագործած Տեղապահութիւնը բառը: Պ. Քապաթէք ըսաւ, որ ինք պիտի պնդէ, որ վերջնական համաձայնութեան մէջ նշուի այդ եզրը: Քապաթէք ըսաւ, որ ինք ծագումով կէս հայ է եւ իր մեծ հայրերը ընտանիքի անդամներ կորսնցուցած են շարիներուն:

«Նիւ Եորք Լայֆ»-ի փոխ նախագահ Պիլ Վերֆելման ըսաւ, որ «մեր արձանագրութիւնները (այդ շրջանին վերաբերեալ) չեն օգտագործեր ցեղասպանութիւն եզրը, այլ՝ հաւաքական սպանութիւններ կամ շարդեր»: «Սակայն ընկերութիւնը կը ձանձնայ, որ շատ ահարկու դէպքեր պատահած են 1915ին, եւ որոնց պատճառով բազմաթիւ ապահովագրեալներ կորսնցուցած են իրենց կեանքը», ըսաւ ան: Վերֆելման նաեւ ըսաւ, որ հայկական կապակերպութիւններուն վճարուելիք 3 միլիոն տոլարը հաւանաբար յատկացուի հայկական եկեղեցոյ:

Ըստ Անճիլըսի դաշնակցային դատարանը նախքան 1 Յուլիս պիտի տայ իր վերջնական վճիռը «Մարտութեան եւ միւսներ» ընդդէմ «Նիւ Եորք Լայֆ» հարցին մասին: Վճիռը պիտի ճշդէ պահանջողներու յատկ թիւը եւ վճարման գումարը:

«ԶԱՐԹ՝Ք ԵՒ ՄԻ՛ ՆՆՋԷՔ...»

Շարունակում Ա. Էջեմ

Եւ այսօր կը տօնենք 1700 տարիներու վրայ երկարող լուսին ու լուսի. հաւատքի ու տեսիլքի ուխտագնացութիւնը մեր ժողովուրդին: Մեր պատմութեան այս վճռական հանգրուանին, 1700 տարիներու խորքէն, պատմութեան ընդերքէն հոգեւոր կու գան մեր ժողովուրդի հոգիի ու մտքի հսկաները, մեր սուրբերը, մեր նահատակները ու կ'ըսեն մեզի՝

«Երգեցէք որդիք ազգին հայոց երգ նոր...»:

Մեր ժողովուրդի հաւատքի ուխտագնացութեան ներկայ հանգրուանը մտայն է ու տխուր: Մեր անցեալով պարծենալու ամէն պատճառ ունինք: Սակայն մեր ներկայով հպարտանալու շատ պատճառներ չունինք: Մեր ազգի ներքին կեանքը ու մեզ շրջապատող պայմանները լեցուն են այնպիսի երեւոյթներով ու կացութիւններով, որոնք մտահոգիչ են ու մանաւանդ սարսփազդու:

Նահանջի մէջ է մեր կեանքը ամէն տեղ, ամէն մակարդակի վրայ եւ բոլոր բնագաւառներէն ներս:

Կը նահանջէ մեր հայրենիքը, երբ արտագրքը լայն ծաւալով կը շարունակուի. երբ հոգեւոր, բարոյական ու իմացական այլապատիւ հոսանքներ կը շարունակեն թափանցել մեր կեանքէն ներս, երբ իշխանութիւնը իր բոլոր ոլորտներով ու օղակներով ինքզինք ամրապնդելը իրեն առաջնահերթութիւն կը նկատէ քան թէ ժողովուրդի սնունտական վիճակի բարելաւումը:

Կը նահանջէ մեր եկեղեցին, երբ փոխանակ այսօրուան աշխարհի պահանջներուն դիմաց ինքզինք վերանորոգելու ու մեր ժողովուրդի կեանքին մէջ հաւատքի առաքելութեամբ ու ազգային ծառայութեամբ իր կոչումը արժեքներով, փակուած կը մնայ ինքն իր մէջ իբրեւ սոսկ գանձարանը անցեալի մեր հոգեւոր արժեքներուն ու աւանդութիւններուն:

Կը նահանջէ մեր մշակոյթը, երբ սկսած է կորսնցնել ինքզինք վերանորոգելու ներքին ուժականութիւնը, սկսած է պարպուիլ իր ստեղծագործական երկունքէն եւ գունաթափիլ ու այլափոխուիլ օտար մշակոյթներու ազդեցութեան ներքեւ:

Կը նահանջէ Սփիւռքը, երբ Միջին Արեւելքի կազմակերպ գաղութները սկսած են նստանալ, երբ Արեւելեան Եւրոպայի գաղութներուն տակաւին կը պակսի ներքին կազմակերպչական հզօրութիւնը ու

Արեւմտեան երկիրներու մեր գաղութները այլասերումի մնալուն վտանգին ենթակայ են:

Ու տակաւին, կը նահանջէ հայ ընտանիքը ու հայ դպրոցը. կը նահանջեն մեր կազմակերպութիւնները, մեր միութիւններն ու կառոյցները:

Կը ինչեւ 72 տարիներ առաջ գրուած Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» գիրքը: Նո՛յն է կացութիւնը այսօր, եւ թերեւս աւելի՛ն: Նայեցէ՛ք մեր շուրջը: Բարոյական ըմբռումներու խթանում, հոգեւոր արժեքներու անտեսում, ազգային աւանդութիւններէն ու սրբութիւններէն հեռացում, համազգային մտահոգութիւններուն ու երպարներուն նկատմամբ տակաւ աճող անտարբերութիւն, որակի ու ոգիի անկում, հաւատքի ու յանձնառութեան նուազում եւ տակաւին այլ յոյս երեւոյթներ սկսած են իրենց ներկայութիւնը պակաս դարձնել մեր հաւաքական կեանքէն ներս:

Ո՞ր է մեր գիտակից հոգեւորական դասը, մեր յանձնառու մտաւորականութիւնը, մեր աշխուրջ քաղաքական ղեկավարութիւնը: Հէ կարելի անտարբեր մնալ այս ազգակործան ընթացքին դիմաց: Հէ կարելի չտագնապիլ այս սհաւոր երեւոյթին դիմաց: Սակայն

չի՛ բաւեր միայն քննադատել կամ Մովսէս Խորենացիին նման ողբը հիւսել մեր ազգի ներկայ կացութեան: Պէտք է ճիշդ փաստաձեւով կատարել մեր ազգային վերքերուն ու դարմանումի համապատասխան ընթացք մը ճշդել: Այն է մեր փրկութեան ու հզօրութեան միակ ապահով ուղին:

Արդ, «Կարթի՛ք եւ մի՛ ննջէք...»:

Չարթի՛ր ժողովուրդ հայոց. կարթի՛ր անտարբերութենէն եւ ինքնաքննական ու իրապաշտ մտեցումով հարց տուր. - Ո՞ր էս ներկայ աշխարհին մէջ...:

Ներիք է այլեւս անցեալով միայն հպարտանալը. հերիք է այլեւս անցեալին մեր ծառայած արժեքներն ու սէմպոյնները դրամագուլիսի վերածած ներկայանալը մեր շրջապատին: Աշխարհը արագընթաց յառաջդիմութեան մէջ է: Համաշխարհայինացումի այս դարաշրջանին մարդիկ չեն նայիր անցեալին, այլ ներկային ու ապագային միայն. ինչ ենք այսօր, ինչ կը ծրագրենք ըլլալ մահուանը: Այս է կենսականը: Հետեւաբար, այլեւս դադարիք անցեալի պահակը ըլլալու կրաւորական վիճակէն,

այլեւս դուրս գանք մեր նեղ պարունակէն, պատռենք ընդհանրապէս խաբուսիկ շարքը, տեսական սկզբունքներով ու անիրատես մտեցումներով մեր ժամանակը չվատենք: Մենք պէտք ունինք նոր շունչի ու նոր տեսիլքի ներկայ աշխարհին մէջ մեր ներկայութիւնը ապահովելու համար: 1700ամեակ կերտած մեր եկեղեցին, մեր ազգը ու մեր հայրենիքը նոր որակով, նոր հնչեղութեամբ, նոր կենսունակութեամբ պէտք է ներկայանան այսօրուան աշխարհին՝ իրենց նորոգելու երգը երգելու նոր աշխարհի նոր համանուագին մէջ:

Այն է ներկայ աշխարհի պահանջը: Այլապէս անցեալ պիտի մնանք ներկային մէջ: Պիտի ճահճանանք. պիտի նստանանք, պիտի գունաթափուինք: Այն է նաեւ մեր նոր սերունդներուն սպասումը, այլապէս անոնք պիտի հեռանան մեր կեանքէն ուրիշ միջավայրերու մէջ իրենց երապնէրուն ու ձգտումներուն գոհացումը գտնելու:

«Չարթի՛ք նոր ժողովուրդ, նոր երգք առնալ նորոգողին...»:

Ու որպէսզի մեր երգը ըլլայ հնչեղ, պէտք է ազգը իր կեանքին յստակ օրակարգը խստապահել. իր ժամանակակից պատմութեան ընթացքը

ճշդէ, իր տեղը ու դերը սահմանէ այսօրուան աշխարհին մէջ:

Ու որպէսզի մեր երգը դառնայ լսելի, պէտք է ան ըլլալ ներդաշնակ ու համահունչ մեր ազգի բոլոր պատկանելուն միատեղ ու միակամ մասնակցութեամբ:

Ահա այն ատեն միայն 1700ամեակը կը ստանայ իր ճշմարտ իմաստը: Ահա այն ատեն միայն յարութիւնը Քրիստոսի մեզի համար կը դառնայ աղբիւր վերանորոգ կեանքի ու տեսիլքի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ....

Շարունակում Ա. Էջեմ

Հրաշափառ Իր Յարութեամբ Աստուծոյ Որդին լրումին հասցրեց փրկագործական Իր առաքելութիւնը: Մեղքի դիմաց խաչուեց Ինքն Անմեղութիւնը, որպէսզի յարատեւ նորոգուի Աստուածակերպ պատկերը խաթարուած մեր կեանքը: Քրիստոս աշխարհ եկաւ որպէս Մեր ուսեր սերմանեց, ողորմութիւն ուսուցանեց, հաշտութիւն դարձաւ եւ խաղաղութիւն ու կեանք պարգեւեց, քանզի Ինքն իսկ է Յարութիւն եւ կեանք: Արդ, Քրիստոսի խաչով ներուած են մեզ մեր մեղքերը ու Նրա Յարութեամբ՝ յուսուորուած դէպի Աստուած մեր ճանապարհը:

Սիրելի ժողովուրդ հայոց ի Սփիւռս աշխարհի. 2000 տարի «Մենք իսկ սկանաւտեւ եղանք Նրա մեծութեանը» (Բ Պետր. 1.16), Նրա պարող ու ապրեցողի զօրութեանը: 2000 տարի Յարութեամբ Քրիստոս քայլում է մեր հողում, մարմին առնում մեր արարումներում, ապառնութեան բաղձանքում, խաղաղութեան երապում, բարիք ստեղծելու ձգտումներում: Որպէս քրիստոնէայ առաջին պետութիւն եւ պա՛ 17 դար մեր ժողովուրդը Յարութեան յոյսը դարձրել է համազգային իր կեանքի փարսը: Յարութեան յոյսով պինդաւոր՝ նաւարկել խորհրդի ու որդայթիւնի միջով: Յարութեան հաւատով կոխել խաւարը մերձելու, մահեր յաղթելու իր կամքը: 1700 տարի, սիրելիներ՝ մեր, Սուրբ Էջմիածինը Յարութեամբ Փրկչի Էջքի խորհրդով շաղախն է հայոց միաբանութեան:

Այսօր, երբ 2001 թուականի յոբելեանապարդ տարին փառապալկ թագադրում է Յարութեան շնորհանորդ խորհրդով, Միածին Էջքի Սուրբ Սեղանի առջեւ աղօթարար հոգով, յանուն աշխարհասփիւռ մեր ժողովուրդի աներկբայ վկայում ենք. Տէր, մե՛նք պահեցինք մեր հաւատարմութիւնը Քէպ, տկարացանք, բայց չուրացանք. նոյնիսկ երբ մահուան ու չարիքի դէմ յանդիման թում էր, թէ մոռացել էս մեզ:

Փա՛նք Քէպ, Տէր, եւ Յարութեամբ Չորութեանը Քո, որ նախախնամող Քո կամքով եւ ամենախնամ օրհնութեամբ նոր հապարամեակ ենք թեւակոխում յաւատարմութեամբ ու հոգեւոր-ազգային մեր կեանքի վերարթնութեան ու վերաշինութեան, ազգային մեր նուիրական իղձերի իրականացման յոյսերով:

Փա՛նք Քէպ, որ պարզեցիր մեզ քրիստոնէայ առաջին պետութիւնը ինչեւ շնորհն ու պատիւր եւ համայն քրիստոնէայ աշխարհի հետ այսօր ապրելու Քո Յարութեամբ ներկայութիւնը եւ երկրպագելու բարեբանելի Սուրբ Անուանը Քո:

Երիցս Փա՛նք Քէպ Աստուծային Քո Սիրով, կենդանարար Յոյսի եւ Յարութեան Հաւատով պարգեւի համար, որ պայմանն ու իմաստն են տիեզերքի գոյութեան ու մարդկային կեանքի:

Յիւրախ, չնչին այնպէս չի վերափոխել աշխարհը, որքան Յարութեան հաւատը, որ շնորհեց մարդկութեանը մեղքի կապանքներից ազատ լինելու հնարաւորութիւնը: «Որ հոգի Տեսան է, անդ պատուութիւն է» (Բ Կորնթ. 3.17):

Քրիստոս պատուութեան Իր հոգին պարգեւեց մարդկութեանը, ապառնութիւն՝ ճշմարտութիւնը ճանաչելու, ապառնութիւն՝ ճշմարտութեան հետեւորդը լինելու, ապառնութիւն՝ ճշմարտութիւնը պաշտպանելու մէջ չվարանելու:

301 թուականին չվարանեցինք քրիստոնա-հալած հեթանոս աշխարհում պետականօրէն պարգել Քրիստոսի ապառնութեան խաչանիշ զրօշը, որ երբեք չի խնայարեւել մեր հոգիներում, երբ անգամ կորցրել ենք ազգային մեր պետականութիւնը: Խաչանիշ այդ զրօշով ընդամենը մէկուկէս դարում կերտեցինք հայոց ինքնաձեւակցութեան, ինքնարտայայտման ու ինքնահաստատման Աստուծոյցեաց դպրոցը, ուր ուսուցանում է Յարութեամբ Երկնային Վարդապետը: Խաչանիշ այդ զրօշով ապրեցինք՝ ժառանգականութեան կենդանի կապով հաղորդ ու հաւատարիմ Լուսաւորչի, Ներսէս Մեծի եւ Սահակ-Մաշտոցի՝ հայ հոգու, սրտի ու մտքի յուսաւորութեան, Քաջն Վարդանանց՝ հայ ոգու յաղթութեան անմահ դպրոցին:

Հայոց Դարձի 1700ամեակի տօնակատարու-

թեան նշանակալի այս տարում, սիրելի հայորդիներ, ուխտենք մեր հոգիներում արթուն պահել յաղթական այդ դպրոցի զօրաւոր ոգին, ապրենք Յարութեամբ Փրկչի ներկայութիւնն այնպէս, ինչպէս Յարութեան հաւատին վստահած մեր նախնիք, որպէսզի մեր խօսքը, չինչի դատարկ ու անտեղի, եւ մեր գործը չլինի արժեւորելի աննպաստակ, այլ ժառանգի հայրենական մեր կեանքի շինութեանը՝ քար աւելացնի անկախ մեր Հայրենիքի հզօրութեան կառոյցին, շաղախ՝ հայոց միաբանութեանը, լոյս՝ պայծառութեանը Հայաստանայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Հայոց Դարձի 1700ամեակի խորհրդով լեցուն՝ հաւատով խոստովանենք մեր պատկանելութիւնը Աստուածակառոյց Հայ Եկեղեցուն, որպէսզի այն՝ զօրաւոր մեր հաւատարմութեամբ, շարունակի առաջնորդել համազգային մեր երթը դէպի Աստուած: Չօրանանք հաւատով եւ զօրացնենք աշխարհասփիւռ ազգային մեր կեանքը:

Գործեր ձեռնարկենք Յարութեան վստահութեամբ, լեցուն միմեանց հանդէպ Յարութեամբ սիրով, որ շունչի երկմտութիւն ու երկիր, սէր, որ չի նախանձու, չի անբարատանում, չար բան չի խորհում, անիրաւութեան վրայ չի ուրախանում, այլ միշտ հաւատում է ու միշտ յուսադրում: Անպարտելի, արարող այդ սիրով հաւատանք ապա մեր Հայրենիքի յուսաւոր գայիքին: Խաչադրոշմ կնիքով մեր հոգու, խաչանիշ պետական զրօշով ազգովի՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս միաբան, պիտուրագրուենք ու բանակ դառնանք՝ ամրապնդելու մեր ձեռքբերումները, մեր նուաճումները, համատեղ կառուցելու հայոց այսօրն ու վաղուան նոր օրը:


Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց ի սփիւռս աշխարհի.

Քրիստոսի Տիեզերական Եկեղեցու բոլոր պատկանելի հետ միասնաբար այսօր՝ նոր հապարամեակի արշալոյսին, աղօթենք առ Միածին Փրկիչը եւ հայցենք. «Լսելի արա մեզ, Տէր, զձայն անտարաւոր հրեշտակի...» եւ Յոյսով, Հաւատով ու Սիրով պատկեալ Քո Յարութեան լոյս խորհրդով հաւատարի մեր հոգիներում:

Խաղաղութիւն ու օրհնութիւն բաշխիր, Տէր, համայն աշխարհին եւ Սուրբ Հոգու շնորհները բոլոր ազգերին՝ ապրելու երջանկաբար, աշակից միմեանց, որպէսզի քրիստոնէական համեղբայրութիւնը՝ հաստատուած Քո Սուրբ Յարութեան հաւատի ճշմարիտ արմատին, բարի պտուղներ պարգեւի աշխարհին, եւ հացն ու գինին յարատեւ բաշխուեն ի հաղորդութիւն Յարութեան եւ կեանքի:

Քրիստոս Յարեալ ի մեռելոց Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 4832
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ



| ԵՐԻՇՁՈՆԱԿԱՆ | ՈՒՂԱՎԱՅՅԵԱՑ |
|-------------------------------------------------------|------------------------------------------------------------|
| 1. «Յորմիւլա 1»ի ֆինլանտացի վարորդ: | 1. Շրջակայ - Յետոյ: |
| 2. Ժողովի նիւթերու ցանկ - Շին Ֆէյնի գինեւորական թեւը: | 2. Ասիական երկիր - Պաշտի միջոց: |
| 3. Մասնիկ - Բախտ, ճակատագիր: | 3. Բարակովի - Իտալիոյ քաղաքներէն: |
| 4. Անբաղադատելի կամ անզուգական: | 4. Նախաճաշիկ - Պղտոր գետի թանձր մրուր: |
| 5. Կիլիկեան քաղաք - Ճիւլզ: | 5. Այլ - Մարտեան լրատու գործակալութիւն: |
| 6. Թուշ - Չաւարով կամ բրինձով պատրաստուած կերակուր: | 6. Հայաստան՝ բոստօսարներու - Կտոր: |
| 7. Այրօրեանէն - Ուռնակ: | 7. Նմանաձայն գիրեր - Կրտուած ոչխար - Չողայ: |
| 8. Այլիմին - Տարածքի միաւոր: | 8. Յուցական ածական - Յաւելում - Հայրենի օրաթերթ: |
| 9. Լուսաւորիչի հայրը - Կրակոյ գէշք: | 9. Վարքուարք: |
| 10. Կայթ - Մարաջախ - Գաւազան - 420: | 10. Հիւսիսային Ամերիկայի լիճերէն - Գեղամ, Սարեանի երկերէն: |
| 11. Գար, ազուուուկ - Եղեմի երրորդ գետը: | 11. Մարտիրոս - Ֆրանսական քաղաք: |

ԹԻՒ 4831
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄ

| | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|----|----|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | |
| 1 | Բ | Ո | Վ | Ա | Ս | Գ | Ս | Ս | Կ | Չ | Լ |
| 2 | Ա | Բ | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | |
| 3 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |
| 4 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |
| 5 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |
| 6 | Լ | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | |
| 7 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |
| 8 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |
| 9 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |
| 10 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |
| 11 | Ս | Ս | Գ | Ս | Չ | Լ | Ս | Ո | Վ | Ա | |

ՀՍՏՐԱԿԻ ԽՆԴԻՐԵՐՈՒՆ ՊՍԱՍՄԱՆՆԵՐԸ
1. 1...#xe1+ 2. #f1 #xf1# 0?1
2. 1...@f2+ 2. @h5 #xh3# 0?1
ՅՐԴ ԷՋԻ ՀԱՐՑԱՐԱՆԻՆ ՊՍԱՍՄԱՆՆԵՐ
1)բ. 2)գ. 3)գ. 4)ա. 5)բ: